ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ա.

ԹՈՒՂԹԵՐ

(Ա.ռ աստուածասէր ոմն պարոն)

Վայելչագունեղ եւ արժանաւորութեամբ ճոխացելոյ եւ ըստ նարդենիս պայծառագունեղ պերճացելոյ, բարեպաշտօն իսկ եւ զերազանցապէս աստուածասէր պարոն։

Իբր կարօտիւ պատճառ իմն զտեալք աղերսել փութամբ աստանօր զընծայս օրհնութեան ի բաբունեաց ուղղասիրաց, ի քահանայից բարեկրօնից, յերեւելեաց անարժանից եւ ի ռամկաց մաքրասրտից, ի ծերոց զղջասրտից եւ ի կանանց բարեզգեցից, ի մանկանց մաքուր անձանց եւ յարժանեաց սուրբ բերանոց, զորոց յուսամք հաճոյացելոց անձանց մաղթանօք ընկալցի Քրիստոս եւ ձօնեալ փոխատրեսցէ զհայցուածս որ վասն քոյդ եւ վասն քոյոց կենացդ։

Եւ առ այս համարձակութեանս պատճառանօք յիշեցուցանեմք քոյդ մեծանձնութեանդ զբան Իմաստնոյն Սողոմոնի թէ Բարութիւնք արդարոց յօրինեն զքաղաք եւ ի կորուստ ամբարշտի եղեւ ուրախութիւն, զոր աստանօր յանգեալ յարմարեցաւ ի վերայ արդարոյդ բարերարութեանց գործելեաց՝ յօրինեալ